«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ- ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

Ք.Երևան **21.08.2020թ.**

2020թ. օգոստոսի 21-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի 2020-2021 ուստարվա անդրանիկ նիստը՝ Ի.Վարդանյանի նախագահությամբ: Նիստը անցկացվում էր հեռավար ձևաչափով: Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները, քարտուղար՝ Լ.Հարությունյանը, ամբիոնի վարիչները և հիմնական դասախոսական կազմը, ուսանողական խորհրդից՝ Ա.Գալստյանը, հրավիրված զեկուցողներ՝ Ն.Սահակյանը և Ա.Գյոզալյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. Մանկավարժական խորհրդի կազմի վերանայման և հաստատման մասին:
   (Զեկուցող, Մանկավարժական խորհրդի քարտուղար՝ Լ.Հարությունյան):
2. 2020-2021 ուստարվա դիմորդների ընդունելության արդյունքների մասին:
   (Զեկուցող՝ Ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ն.Սահակյան):
3. 2020-2021 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների մասին:
   (Զեկուցող, Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):
4. 2020-2021 ուստարվա ուսումնական պլանների քննարկում:
   (Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):
5. 2020-2021 ուստարվա հաստիքացուցակի և «Հաստիքացուցակում ներառված պաշտոնների նկարագրերի (անձնագիր)» նախագծերի քննարկում:
   (Զեկուցող, ՄՌԿ և Ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյան):

1. **Լսեցին.** Մանկավարժական խորհրդի քարտուղար Լ.Հարությունյանի ելույթը Մանկավարժական խորհրդի կազմի վերանայման և հաստատման վերաբերյալ:

Ողջունելով Խորհրդի անդամներին, Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ անհրաժեշտություն է առաջացել վերանայել և հաստատել Մանկավարժական խորհրդի կազմը: Շարունակելով ելույթը, նա ներկայարեց Մանկավարժական խորհրդի նոր կազմը, առաջարկելով քննարկել և հաստատել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն՝ Ի.Վարդանյանը առաջարկեց հաստատել նոր կազմը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել Մանկավարժական խորհրդի նոր կազմը (կազմը կցվում է):
2. Հանձնարարել Մանկավարժական խորհրդի քարտուղար՝ Լ.Հարությունյանին նիստի արձանագրության քաղվածքը տրամադրել ուսանողական խորհրդին:

2. **Լսեցին**՝ Ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ն.Սահակյանի ելույթը 2020-2021 ուստարվա դիմորդների ընդունելության արդյունքների վերաբերյալ:

Ն.Սահակյանը իր իր ելույթում ներկայացրեց 2020-2021 ուստավա դիմորդների ընդունելության աշխատանքների վերաբերյալ ամփոփ տեղեկություն: Համաձայն ընդունելության կանոնագարգի և լիցենզիզյով սահմանված տեղերի՝ 20 ուսանող «Դեղագործություն» մասնագիտությամբ հիմնական ընդհանուր կրթություն, 20 ուսանող «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ հիմնական ընդհանուր կրթություն, 20 ուսանող «Քույրական գործ» մասնագիտությամբ հիմնական ընդհանուր կրթություն, 20 ուսանող «Դեղագործություն» մասնագիտությամբ միջնակարգ ընդհանուր կրթություն, 20 ուսանող «Քույրական գործ» միջնակարգ ընդհանուր կրթություն (բոլորը վճարովի):
0911.01.5 «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության միջնակարգ կրթության հիմքով քոլեջ է դիմել 1 դիմորդ:
0911.01.5 «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության հիմնական ընդհանուր կրթության հիմքով քոլեջ է դիմել 11 դիմորդ:
0911.01.5 «Դեղագորխություն» մասնագիտության հիմնական ընդհանուր կրթության հիմքով 10 դիմորդ:
0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով 16 դիմորդ:
0916.01.5 «Քույրական գործ» մասնագիության հիմնական ընդհանուր կրթության հիմքով 1 դիմորդ:
Թափուր տեղերի համար դիմել են.
0916.01.5 «Դեղագործություն» հիմնական կրթության հիմքով դիմել է 1 դիմորդ

0911.01.5. «Ատամնատեխնիկական գործ» հիմնական կրթության հիմքով 1 դիմորդ:

Ցավոք եղել են նաև թափուր տեղեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսանող՝ Ա.Գալստյանը իր ելույթում նշեց, որ Հայաստանում հայտարարված արտակարգ դրության պատճառով ուսանողական խորհուրդը ամբողջությամբ չի կարողացել իրականացնել քարոզչական և տեղեկատվական աշխատանքներ: Առկա իրավիճակից ելնելով քոլեջի ուսանողները դասախոսների հետ միասին քարոզչական և տեղեկատվական միջոցառումները կազմակերպել են միայն համացանցի միջոցով:

Տնօրեն՝ Ի.Վարդանյանը հավելեց, որ կոնկրետ այցելություններ, հանդիպումներ դպրոցներում աշակերտների և ծնողների հետ չեն իրականացվել: Այնուհանդերձ, այս ուստարում դիմորդների քանակը այդքան էլ վատ չէ: Որպեսզի կարողանանք լրացնել այս տարվա բացը, պետք է պլանավորել հաջորդ ուստարվա համար նպատակային և թիրախային տարատեսակ միջոցառումների պլան:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 2020-2021 ուստարվա դիմորդների ընդունելության գործընթացի արդյունքները ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանին կազմակերպել հանդիպումներ առաջին կուրսի ուսանողների հետ:

3. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2020-2021 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

Ն.Եգորյանը իր ելույթում նախ նշեց, որ նախորդ ուստարվա երկրորդ կիսամյակը, որն ամփոփեցինք հեռավար ուսուցմամբ, այս պահի դրությամբ ուսումնական գործընթացը հեռավար կազմակերպելու վերաբերյալ դեռ ԿԳՄՍ նախարարությունից որևէ գրություն, կամ շրջաբերական չենք ստացել: Այդ իսկ պատճառով կազմակերպչական աշխատանքները իրականացվել են ըստ պլանի, որից հետո նա ներկայացրեց 2020-2021 ուստարվա ուսումնական գործընթացին ընդառաջ ուսումնական մասի և ամբիոնների հետ համատեղ իրականացված նախապատրաստական աշխատանքները:

Արդյունքում.

- Վերանայվել են ըստ մասնագիտությունների բոլոր ուսումնական պլանները՝ համաձայն ՊԿՁ-ների:
- Առկա են բոլոր 4 մասնագիտությունների և միջնակարգ և հիմնական ընդհանուր կրթության հիմքով ուսումնական պլանների նախագծերը, որոնք այսօրվա նիստով կներկայացվեն վերջնական քննարկման:
- Ուսումնական պլաններով նախատեսված դասաժամերը հաշվարկվել են, տնօրենի

հետ համաձայնեցվել և տրմադրել ամբիոններին:

- Հաստատված ժամաբաշխման հիման վրա պատրաստել է դասախոսների տարիֆիկացիայի նախագիծը:
- Կազմվել են 8 ուսումնական խմբեր՝ 3 հանրակրթական, 5 մասնագիտական:
- Պատրաստվել է ըստ մոդուլային ուսուցման դասացուցակները:
- Վերանայվել են ամբիոնների կազմերը:
- Ուսումնական մասնաշենքն ու բոլոր ստորաբաժանումները մաքրությամբ, անհրաժեշտ կահավորմամբ պատրաստ են նոր ուսումնական տարվա մեկնարկին:

Ն.Եգորյանը անդրադաձավ նաև ՈԱ պատասխանատուի նախորդ ուստարվա ընթացքում իրականացված ուսումնասրությանը, որի արդյունքում առաջարկեց վերանայել գործող ՄԿԾ-ը և մշակել նոր ՄԿԾ-ի ամբողջական փաթեթներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն Ի.Վարդանյանը հավանություն տվեց ՄԿԾ-ի վերանայման գաղափարը և առաջարկեց տնօրինական խորհրդի նիստում քննարկել և կայացնել համապատասխան որոշում:

Լ.Հարությունյանը և ամբիոնի վարիչներ՝ Ս.կեսոյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Մելքոնյանը իրենց ելույթում նշեցին, որ իրոք կատարված նախապատրաստական աշխատանքները բավարար են ուսումնական տարին սկսելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Նախապատրաստական աշխատանքները ընդունել ի գիտություն և համարել բավարար:
2. Հանձնարարել ՈԱ պատասխանատուին սեղմ ժամկետներում մշակել ՄԿԾ-ի վերանայման համալիր միջոցառումներ և ներկայացնել տնօրինական խորհուրդ:
3. Հանձարարել ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին ուստարվա վերջում ներկայցնել կատարված աշխատանքների վերաբերյալ ամփոփ զեկույց:

4. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարչ Լ.Հարությունյանի ելույթը 2020-2021 ուստարվա ըստ մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնկան պլանների նախագծերի, ներկայացման վերաբերյալ:

Լ.Հարությունյանը իր ելույթում նշեց, որ ուսումնական պլանների նախագծերը վերանայվել և լրամշակվել են 2020-2021 ուստարվա նախապատրաստական աշխատաքների ընթացքում, որին ակտիվ մասնակցել են նաև ամբիոնի վարիչները: Ամփոփելով ելույթը, նա նշեց, որ նախագծերը պետք է վերջնական քննարկվեն և երաշխավորվեն Քոլեջի Տնօրինական խորհուրդ ներկայացնելու համար (ուսումնական պլանների նախագծերը կցվում են):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն. Եգորյանը և դասախոս՝ Ա.Վարդանյանը իրենց ելույթում նշեցին, որ ուսումնական պլանների նախագծերը հանգամանորեն լսվել և քննարկվել է ամբիոններում և այն լիովին համապատասխանում են պետական կրթական չափորոշիչի բոլոր պահանջներին և առաջարկեցին երաշխավորել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Երաշխավորել 2020-2021 ուստարվա ըստ մասնագիտությունների ուսումնական պլանների նախագծերը ներկայացնելու տնօրինական խորհուրդ:
2. Հանձարարել ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին ուսումնական պլանները հաստատվելուց հետո տրամադրել մասնագիտական ամբիոններին:

5. **Լսեցին.** ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանի ելույթը 2020-2021 ուստարվա հաստիքացուցակի և «Հաստիքացուցակում ներառված պաշտոնների նկարագրերի (անձնագիր)» նախագծերի քննարկման վերաբերյալ:

ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանը նախ ոջունեց խորհրդի բոլոր անդամներին և հաջողություն մաղթեց նոր ուսումնական տարվան ընդառաջ, որից հետո հակիրճ ներկայացրեց 2020-2021 ուստարվա դասախոսական տարիֆիկցիայի հաստիքացուցակի նախագիծը: Նա նշեց, որ այս ուստարում դասախոսական կազմում լուրջ փոփոխություններ չեն եղել: Ընդամենը 9 դասխոսներ դուրս են եկել աշխատանքից, նրանց փոխարեն ընդունել համապատասխան դասախոսներ:

Նա նշեց, որ հաստիքացուցակը համապատասխանում է ՀՀ ԿԳ նախարարության կողմից ներկայացված միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակին:

Ա.Գյոզալյանը ներկայացրեց նաև ՈԱ պատասխանատուի հետ համատեղ և ՀՀ Կառավարման ակադեմիայի Որակի ապահովման կենտրոնի ղեկավար՝ Գայանե Հովհաննիսյանի աջակցությամբ մշակված քոլեջի «Հաստիքացուցակում ներառված պաշտոնների նկարագրերի (անձնագիր)» նախագիծը: Նշելով, որ այն ամբողջովին համապատասխանում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ներկայացված ՄՄՈւՀ-ի ընդհանուր հաստիքացուցակի նվազագույն պահանջներին:

Ամփոփելով ելույթը, Ա.Գյոզալյանը առաջարկեց քննարկել և երկու նախագծերը երաշխավորել ներկայացնելու տնօրինական խորհուրդ վերջնական քննարկման (հաստիքացուցակի և պաշտոնի անձնագրի նախագծերը կցվում են):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն՝ Ի.Վարդանյանը և ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանը իրենց ելույթում նշեցին, որ ներկայացված փաստաթղթերը նախապես

ուսումնասիրվել են իրենց կողմից և լիովին համապատասխանում են քոլեջի ներկայիս կառավարման կառուցվածքային համակարգին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Երաշխավորել 2020-2021 ուստարվա հաստիքացուցակը և ներկայացնել Տնօրինական խորհուրդ վերջնական քննարկման:
2. Երաշխավորել «Հաստիքացուցակում ներառված պաշտոնների նկարագրերի (անձնագիր)» նախագիծը և ներկայացնել Տնօրինական խորհուրդ:
3. Հանձնարարել ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանին նոր հաստատված հաստիքացուցակի մասին տեղեկացնել անձնակազմին:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

Ք.Երևան **26.11.2020թ.**

2020թ. նոյեմբերի 26-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի հերթական նիստը, Ի.Վարդանյանի նախագահությամբ: Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները, քարտուղար՝ Լ.Հարությունյանը, ամբիոնի վարիչները և հիմնական դասախոսական կազմը, ուսանողական խորհրդից՝ Ա.Գալստյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը առաջարկեց հոտնկայս մեկ րոպե լռությամբ հարգել 44 օրյա պատերազմի զոհերի հիշատակը:

Որից հետո ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. Ուսումնական մասի 2019-2020 ուստարվա կատարողականի ներկայացման մասին:

   (Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ, ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):
2. Քոլեջի 2019-2020 ուստարվա ամբիոնների գործունեության հաշվետվության ներկայացում:

   (Զեկուցող, Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):
3. Քոլեջում կրթության որակի ներքին ապահովման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հաղորդում:

   (Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ, ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ, ՈԱ պատասխանաու Լ.Հարությունյանի ելույթը Ուսումնական մասի 2019-2020 ուստարվա կատարված աշխատանքների կատարողականի վերաբերյալ:

Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանը իր ելույթում նշեց, որ 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակը կազմակերպվել էր հեռավար (առցանց) եղանակով, այնուհանդերձ Քոլեջի ուսումնական մասի պլանով նախատեսված բոլոր աշխատան-

քները և միջոցառումները կատարվել է ամբողջովին: Ելույթում հակիրճ ներկայացրեց այն աշխատանքները, որոնք իրականացվել են արտակարգ դրության պայմաններում:

Ամփոփելով ելույթը, նա նշեց, որ 2019-2020 ուստարվա կատարված աշխատանքների կատարողականը տրվել է տնօրենին և խորհրդի բոլոր անդամներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսանող Ա.Գալստյանը իր ելութում նշեց, որ 2019-2020 ուստարին ավարտվեց արտակարգ դրության պայմաններում, պլանով նախատեսված որոշ միջոցառումներ ցավոք չիրականացվեցին: Ինչևիցե, ուսումնական մասի շխատանքների վերաբերյալ ուսանողները, հայտնել են իրենց գոհունակությունը ամբիոնի վարիչներին և հենց ուսանողական խորհրդի անդամներին: Քանի որ այս տարի ուսումնական տարին մեկնարկեց սեպտեմբերի 15-ից, առաջին կուրսի ուսանողների հետ հանդիպումները մեկնարկեցին սեպտեմբերի 20-ից, որի ընթացքում ուսանողական խորհուրդը ներկայացրել է քոլեջի կանոնները և առօրյան:

Ամփոփելով ելույթը, Ա.Գալստյանը նշեց, ուսումնական մասի հետ ակտիվ աշխատանքները շարունակվում են:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և կատրված աշխատանքները գնհատել բավարար (հաշվետվությունը կցվում է):
2. Հանձնարարել ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին մինչև ուսումնական տարվա ավարտը կազմակերպել հարցումներ ուսանողների շրջանում:

2. **Լսեցին՝** Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը Քոլեջի ամբիոնների գործունեության տարեկան հաշվետվության ներկայացման վերաբերյալ:

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը իր ելույթում ներկայացրեց Քոլեջի ամբիոնների գործունեության 2019-2020 ուստարվա հաշվետվությունը ամփոփ տեսքով: Նա նշեց, որ հաշվետու տարին մեծ փորձությունների առաջ կանգնեցրեց ամբողջ կրթական համակարգը: Անմասն չմնաց նաև մեր քոլեջը: Հայաստանում հայտարարված արտակարգ դրության պայմաններում Քոլեջի մասնագիտական ամբիոնները և ողջ անձնակազմը օպերատիվ կարգով կարողացան տեղայնացնել իրենց գործող ուսումնական ծրագրերը, հարմարացնելով առցանց ուսուցման եղանակին: Ն.Եգորյանը հավելեց նաև, որ ինքը անձամբ է համակարգել, ամբիոնների կողմից կատարված աշխատանքները:

Քոլեջի ամբիոնների գործունեության հաշվետվությունների ամփոփան հիման վրա մշակվել է նաև Քոլեջի ընդհանուր գործունեության կատարողականը:

Հաշվետվությունը հակիրճ և ամփոփ ներկայացնելուց հետո, Ն.Եգորյանը առանձին ներկայացրեց մի քանի խնդիրներ որոնք իրականացվել են մասնակի և կամբողջացվեն ընթացիկ տարվա ավարտին: Ամփոփելով ելույթը, Ն.Եգորյանը ի տարբերություն

նախորդ տարիների ներկայացրեց իրականացված քոլեջի գործունեության **SWOT վերլուծության** վերաբերյալ համառոտ տեղեկատվություն: Նշելով, որ բարելավման գործողությունները ներառված են նոր 2019-2024թթ. ՌԶԾ-ում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Քոլեջի ամբիոնների 2019-2020 ուստարվա գործունեության կատարողականը գնահատել բավարար:
2. Հանձնարարել Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին հաջորդ տարվա ընթացքում ներկայացնել ըստ գործողությունների գնահատման կատարողականը:

3. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ, ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանի ելույթը Քոլեջում կրթության որակի ներքին ապահովման աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Լ.Հարությունյանի իր ելույթում նշեց, որ քոլեջում ակտիվ իրականացվում է որակի ապահովման գործընթացներ, մասնավորապես՝

- 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում առցանց եղանակով ZOOM հարթակի միջոցով երկու անգամ կազմակերպվել է հանդիպում ԱԲՀ-ի ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր Ա.Գյոզալյանի հետ:
- Վերջնական տեսքի է բերվել Քոլեջի ՈՆԱ ձեռնարկի նախագիծը, որպես փորձագետ խորհրդատվություն է տրամադրվել Արայիկ Գյոզալյանի և ՄԱԿ-ի կրթության փորձագետ՝ Մարինա Գուրբոյի կողմից:
- Ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքների մեկնարկով պայմանավորված աշխատանքային խմբի ձևավորումը պլանավորվում է իրականացնել 2021 թվականից:
- ԱԲՀ-ի ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր Ա.Գյոզալյանի հետ համատեղ մշակվել են՝ «Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման» ընթացակարգի և «Առարկայական/մոդուլային դասընթացի ուսումնական ծրագիր կազմելու» կարգի նախագծերը, որոնք ներկայացվել են Մանկավարժական խորհրդի անդամներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը և դասախոս Հ.Քոչարյանը իրենց ելույթներում նշեցին, որ անհրաժեշտ է քննարկել և ներկայացնել տնօրինական խորհուրդ հաստատման:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Երաշխավորել «Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման» ընթացակարգի և «Առարկայական/մոդուլային դասընթացի ուսումնական ծրագիր

կազմելու» կարգի նախագծերը:

3. Հանձարարել Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին ձևավորել ՄԿԾ-ի վերանայման աշխատանքային խումբ և ներկայացնել տնօրենի հաստատմանը:
4. Հանձարարել Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին Մանկավարժական խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքների աշխատանքային խմբերի կազմը և իրականացման պլան-ժամանակացույցի նախագիծի վերջնական տարբերակը:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

Ք.Երևան **15.01.2021թ.**

2021թ. հունվարի 15-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի հերթական նիստը: Նիստին ներկա էին քարտուղար՝ Լ.Հարությունյանը, խորհրդի անդամներ՝ ամբիոնի վարիչները և հիմնական դասախոսական կազմը, ուսանողական խորհրդից Ա.Գալստյանը, ինչպես նաև հրավիրված զեկուցող հաշվապահ՝ Ս.Հովակիմյանը: Նիստը նախագահում էր ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը: Խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը գտնվում էին հերթական արձակուրդում:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նախագահող ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը բացելով նիստը ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. 2020-2021 ուստարվա աշնանային կիսամյակի ուսումնական գործընթացի կատարողականի և երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:

   (Զեկուցող՝ Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

2. Քոլեջում ուսումնադաստիարակչական աշխատանքների և կրթության որակի ներքին ապահովման ընթացքի վերաբերյալ:

   (Զեկուցող, Մասնագիտական ամբիոնի վարիչներ):

3. Քոլեջի 2020-2021 ուստարվա աշնանային կիսամյակի ուսման վարձերի հավաքագրման մասին:

   (Զեկուցող՝ Հաշվապահ Ս.Հովակիմյան):

4. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի ընթացքի մասին:

   (Զեկուցող՝ ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կատարողականի և 2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

   Լ.Հարությունյանը ողջունելով բոլոր մասնակիցներին, տեղեկացրեց, որ 2020-2021 ուստարվա աշնանային կիսամյակով ըստ ուսումնական պլանի նախատեսված միջանկյալ

և ամփոփիչ ստուգումները կազմակերպվել են ըստ նախապես հաստատված ժամանակացույցի: Նա նշեց, որ 2020-2021 ուստարվա աշնանային կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ ստուգումների վերաբերյալ ընդհանուր ամփոփ տվյալները կներկայացնի խորհրդի ուսումնական տարվա ամփոփիչ նիստում: Ինչ վերաբերում է 2020-2021 ուստարվա գարնանային կիսամյակի նախապատրաստական աշխատանքներին, ապա բոլոր անհրաժեշտ աշխատանքները գրեթե ավարտված են, մնացել է միայն դասացուցակի և ժամանակացույցի վերջնական տարբերակների քննարկումը: Ամբիոնի նիստերը ըստ պլանավորված ժամանակահատվածով կկայանան, դասախոսները հաստատման կնրկայացնեն իրենց թեմատիկ պլանները, ուսումնական մասը կտրամադրի 2-րդ կիսամյակի դասամատյանները:

Ամփոփելով ելույթը, նա նշեց, որ առաջին կիսամյակում բոլոր քննությունները անցկացվել են ըստ վարման կարգի, ուսանողների կողմից գիտելիքների գնահատման արդյունքների վերաբերյալ բողոքարկումներ և տարաձայնություններ չեն արձնագրվել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքները գնահատել բավարար:
2. Հանձնարարել ամբիոնի վարիչներին կազմակերպել ամբիոնի նիստեր և քննարկել ընթացիկ հարցերը:
3. Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանին, հանձնարարել կազմակերպել վերահսկողություն և արդյունքների մասին պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել քոլեջի տնօրենին:

2. Լսեցին՝ Մասնագիտական ամբիոնի վարիչների ելույթը Քոլեջում ուսումնադաստիարակչական աշխատանքների և կրթության որակի ներքին ապահովման ընթացքի վերաբերյալ:

Դեղագիտական առարկաների ամբիոնի վարիչ՝ Սեդա Կեսոյանը, Թերապիայի, քույրական գործ և նեղ մասնագիտական առարկաների ամբիոնի վարիչ՝ Անյուտա Գրիգորյանը և Ատամնատեխնիկական և ստոմոտոլոգիական առարկաների ամբիոնի վարիչ՝ Արեգնազ Մելքոնյանը իրենց ելույթներում ներկայացրեցին մասնագիտական ամբիոնների կողմից իրականացված աշխատանքները:

Մասնագիտական ամբիոնների կողմից աշխատանքներ են տարվել ուսանողների մասնագիտական կողմնորոշման և ուսումնադաստիարակչական ուղղությամբ: Քոլեջում ուսումնադաստիարակչական աշխատանքները իրականացվում են ուսանողական խորհուրդի հետ համատեղ: Հիմնականում քոլեջում տիրում է բարիդրացիական մթնոլորտ, ոչ մի լուրջ խնդիրներ, կապված ուսանողների վարքագծի հետ կապված չեն արձանագրվել:

Մասնագիտական ամբիոնների վարիչները տեղեկացրեցին, որ քոլեջում որակի ապահովման գործընթացները իրականացվում են համաձայն պլանի՝

- Կազմակերպվել և շարունակվելու են հանդիպում-խորհրդտվությունները ՈԱ

արտաքին փորձագետների հետ:

- Ամբիոններում քննարկվել է Քոլեջի ՈՆԱ ձեռնարկի նախագիծը, որը այսօրվա նիստով հնարավոր է երաշխավորել ներկայացնելու հաստատման:
- Ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքների մեկնարկով պայմանավորված մասնագիտական ամբիոնների կողմից ներկայացվել է ձևավորվող աշխատանքային խմբի թեկանծուներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- Դասախոսներ՝ Հ.Քոչարյանը և Լ.Պռազյանը իրենց ելույթներում նշեցին, որ անհրաժեշտ է առաջարկել ուսանողական խորհրդին ևս ներկայացնել բանիմաց և աշխատասեր ուսանողներ:
- Ուսանողական խորհրդի անդամ Ա.Գալստյանը ուսանողական խորհրդի անունից վստահեցրեց, որ մոտ օրերս ուսանողական խորհրդի կողմից կներկայացվեն թեկնածուների անունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Երաշխավորել Քոլեջի ՈՆԱ ձեռնարկի նախագիծը հաստատման Տնօրինական խորհրդի կողմից:
3. Հանձարարել ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքների իրականացման խմբի թեկնածուների վերաբերյալ զեկուցել Տնօրինական խորհուրդ:
4. Հանձնարարել Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին և ուսանողական խորհրդի նախագահ Ա.Խուդաթյանին կազմակերպել համատեղ հանդիպումներ ուսանողների հետ:

3. **Լսեցին՝** Հաշվապահ Ս.Հովակիմյանի ելույթը Քոլեջի 2020-2021 ուստարվա աշնանային կիսամյակի ուսման վարձերի հավաքագրման վերաբերյալ:

Ս.Հովակիմյանը ներկայացրեց այն մասին, որ անհրաժեշտ է լուրջ միջոցներ ձեռնարկել ուսման վարձերի հավաքագրման գործում, քանի որ այդ հարցը շատ կարևոր է քոլեջի արդյունավետ և անխափան գործունեության համար: Այդ իսկ պատճառով առաջարկեց մասնագիտական ամբիոնների վարիչներին կազմակերպել հանդիպումներ ուսանողների հետ և ուսանողական խորհրդի անմիջական օգնությամբ լուծում տալ այդ հարցին:

Ամփոփելով ելույթը, Ս. Հովակիմյանը ներկայացրեց աշնանային կիսամյակում այն ուսանողների ցուցակը, ովքեր ունեն ուսման վարձի պարտքեր և խնդրեց մասնագիտական ամբիոններին տանել համապատասխան աշխատանքներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին կազմակերպել հանդիպումներ և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

4. **Լսեցին** Ուսումնական մասի վարիչ (ՈԱ պատասխանատու) Լ.Հարությունյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024 թվակների ռազմավարական զարգացման ծրագրի ընթացքի վերաբերյալ:

Լ.Հարությունյանը ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. Զարգացման ռազմավարական ծրագրի ընթացքը, որը դեռ ընդամենը մեկ տարի է ինչ գործարկվում է: Առայժմ ծրագրի գործողությունների իրականացման պլան-ժամանակացույցով նախատեսված աշխատանքները իրականացվում են առանց որևէ խոչընդոտների:

Ամփոփելով ելույթը, Լ.Հարությունյանը նշեց, որ նախատեսվում է ընթացիկ ուստարվա վերջում ներկայացնել տարեկան կատարողական զեկույց, համաձայն պլան-ժամանակացույցի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Լ.Հարությունյանի կողմից տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել Մանկավարժական խորհրդի անդամներին ակտիվ մասնակցել գործող ՌՀԾ-ի գործողությունների իրականացմանը:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

Ք.Երևան **28.06.2021թ.**

2021թ. հունինսի 28-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի 2020-2021 ուստարվա ամփոփիչ նիստը՝ Ի.Վարդանյանի նախագահությամբ: Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները, քարտուղար Լ.Հարությունյանը, ամբիոնի վարիչները, հիմնական դասախոսական կազմը, ուսանողական խորհրդից Ա.Գալստյանը, ինչպես նաև հրավիրված զեկուցող՝ Ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ն.Սահակյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. 2021-2022 ուստարվա ընդունելության աշխատանքների ընթացքի մասին:
(Զեկուցող, Ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ն.Սահակյան):

2. 2020-2021 ուստարվա ամառային քննաշրջանի ամփոփման մասին:
(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

3. 2020-2021 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին:
(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

4. 2020-2021 ուստարվա միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով ուսումնառող ուսանողներին հաջորդ կուրս փոխադրելու մասին:
(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ն.Սահակյանի ելույթը 2021-2022 ուստարվա ընդունելության աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Ն.Սահակյանը ներկայացրեց 2021-2022 ուստարվա դիմորդների ընդունելության աշխատանքները: Դիմորդների մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին

ընդգրկած են եղել 3 մասնագտական ամբիոններից ընդհանուր 8 դասախոսներ: Նրանք եղել են Երևանի հանրակրթական դպրոցներում: Քոլեջի գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկատվությամբ բուկլետներ և թերթիկներ են պատրաստվել և տրամադրվել ընդհանուր՝ 11 դպրոցների 9-րդ դասարանի աշակերտներին: Հանդիպումների ընթացքում ներկայացվել է քոլեջի առօրյան: Իրականցվել է գովազդի տեղադրում Քոլեջի պաշտնական Facebook սոցիալական ցանցում:

Ամփոփելով ելույթը, Ն.Սահակյանը առաջարկեց միջոցներ ձեռնարել Քոլեջի կայքը կամ վերագործարկելու, կամ էլ նոր կայք ստեղծելու ուղղությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական մասի վարիչ Լ. Հարությունյանը և մասնագիտական ամբիոների վարիչները դրական գնահատեցին Ն.Սահակյանի կողմից իրականացված դիմորդների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ կատարված աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 2021-2022 ուստարվա ընդունելության նախապատրաստական աշխատանքները գնահատել բավարար:
2. 2021-2022 ուստարվա Մանկավարժական խորհրդի անդրանիկ նիստում ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

2. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը 2020-2021 ուստարվա ամառային քննաշրջանի ամփոփման վերաբերյալ:

Ողջունելով նիստի բոլոր մասնակիցներին Լ.Հարությունյանը ներկայացրեց միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն», «Մանկաբարձական գործ» և «Քույրական գործ» մասնագիտություն-ներով բոլոր կուրսերում 2020-2021 ուստարվա ամառային քննաշրջանը կազմակերպվել և անցկացվել է ուսումնական օրացույցին և հաստատված ժամանակացույցին համապա-տասխան՝ 23.04.2021թ. – 25.06.2021թ.:

Քոլեջի երկու՝ միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով բոլոր կուրսերում 17.05.2021թ. տնօրենի տեղակալի և ուսումնական մասի վարիչի մասնակցությամբ կազմակերպվել և անցկացվել են քննաշրջանի հետ կապված խորհրդակցություններ:

Կիսամյակի սկզբից ուսանողներին տրամադրվել են քննություններից առաջ անհրաժեշտ առարկայական խորհրդատվություններ:

Քննաշրջանի ավարտին, յուրաքանչյուր կուրսի հետ ամփոփվել են տվյալ կուրսի քննաշրջանի արդյունքները, բարձրաձայնվել առաջադիմության հետ կապված հարցեր (ունեցողներին առանձին-առանձին նեկայավել են ակադեմիական պարտքերի քանակը և դասընթացները):

Քննաշրջանի ողջ ընթացքը վերահսկվել է տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի, ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի և ամբիոնների վարիչների կողմից:

Ամառային քննաշրջանում միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով միասին կազմակերպվել և անցկացվել են ընդհանուր թվով 205 ստուգարք և 11 քննություն:

Եզրափակելով, Լ.Հարությունյանը նշեց, որ ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է հաշվետվությունում (հաշվետվությունը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ամբիոն վարչների տրամադրել անհրաժեշտ խոհրդատվություններ ակադեմիկան պարտք ունեցող ուսանողներին:
3. Հանձնարարել տնօրենի տեղակալին, ամբիոնի վարիչներին. բացատրական աշխատանքներ տանել քննություններին անհարգելի պատճառով չներկայացած ուսանողների հետ:
4. Հանձնարարել ուսումնական մասին կազմակերպված անցկացնել 2020-2021 ուստարվա ամառային քննաշրջանի ակադեմիական պարտքերի մարման գործընթացը:

3. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2020-2021 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ:

Ն.Եգորյանը տեղեկացրեց, որ ըստ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված կարգի ժամանակացույցին համապատասխան մասնագիտական ամբիոններում քննարկվել են պետական ամփոփիչ ատեստավորման քննական հարցաշարերը և քննական տոմսերը: Անհրաժեշտ աշխատանքներում ներգրավված են եղել բոլոր մասնագիտական ամբիոնների դասախոսները և նրանց կողմից տրվել է համապատասխան երաշխավորումներ:

Ն.Եգորյանը տեղեկացրեց, որ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրենի համապատասխան հրամաններով նշանակվել են «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2020-2021 ուստարվա միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով կրթական ծրագրով շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովի նախագահներ:

1. 0916.01.5 «Դեղագործություն 26.05.2021թ. Հրաման №ԸԳ-29-Ա նախագահ՝ Կարեն Սարգսյան «Դենտալ-Ֆարմ» ՍՊԸ-ի տնօրեն:
2. 0911.01.5 «Ատամնատեխնիկական գործ» 26.05.2021թ. Հրաման №ԸԳ-29-Ա նախագահ՝ Արման Մանուկյան «Նյու-Հոփ» ատամնաբուժական կլինիկա ՍՊԸ-ի տնօրեն:
3. 0913.02.5«Քույրական գործ» 26.05.2021թ. Հրաման №ԸԳ-28-Ա նախագահ՝ Ադելինա Մուրադյան «№5 պոլիկնիկիա» ՓԲԸ մանկաբույժ:

Շարունակելով ելույթը, Ն.Եգորյանը ներկայացրեց 2020-2021 ուստարվա պետական ամփոփիչ քննությունների արդյունքները.

- «Դեղագործություն» մասնագիտությամբ թվով 40 շրջանավարտներից պետական ամփոփիչ քննություններին մասնակցեցել են 39-ը շրջանավարտ, նրանք ցուցաբերեցին հետևյալ առաջադիմությունը. գերազանց՝ 4 ուսանող, լավ՝ 22, բավարար՝ 13:
- «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ թվով 16 շրջանավարտներ հանձնեցին միջմոդուլային համալիր երկու պետական քննություններ և ցուցաբերեցին հետևյալ առաջադիմությունը.գերազանց առաջադիմությամբ՝ 4 ուսանող, լավ՝ 4, բավարար՝ 8:

Եզրափակելով ելույթը, Ն.Եգորյանը հավելեց, որ պետական ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում (հաշվետվությունը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին ուսումնասիրել հանձնաժողովների նախագահների առաջարկությունները և հաջորդ ուստարվա ընթացքում ներկայացնել բարելավման միջոցառումներ:

4. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը 2020-2021 ուստարվա միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով ուսումնառող ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու վերաբերյալ:

Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը ներկայացրեց 2020-2021 ուստարվա ուսումնական պլանները կատարած, ստուգարքներն ու քննությունները հանձնած միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով կրթական ծրագրով սովորող «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն», «Մանկաբարձական գործ» և «Քույրական գործ» մասնագիտություններով ուսումնառողների ցանկը: Հանգամանորեն ներկայացրեց ստուգարքների և քննությունների ըստ մասնագիտությունների դրական գնահատական ստացած ուսանողների ցուցակները:

Եզրափակելով ելույթը Ն.Եգորյանը առաջարկեց ցուցակում ներառված ուսանող-ներին երաշխավորել ներկայացնելու տնօրինական խորհուրդ հաստատման:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Երաշխավորել ցուցակում ներառված ուսանողներին համապատասխանաբար փոխադրել հաջորդ կուրս:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան